

# ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

## ԿԱՐԾԻՔ

### ԱՆԻ ԳԱՐԵԳԻՆԻ ՆԵՐՍԵՍՅԱՆԻ

#### «ՆԻԼ ՍԱՅՄՈՆԻ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՆՐԱՅԻՆ և ԹԵՄԱՏԻԿ

#### ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» Ժ.01.07-«Արտասահմանյան գրականություն»

մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ատենախոսության մասին

#### «ՆԻԼ ՍԱՅՄՈՆԻ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՆՐԱՅԻՆ և ԹԵՄԱՏԻԿ

ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» թեմայով ատենախոսությունը գալիս է հավաստելու 20-րդ դարի ամերիկյան դրամատարգիայում ի հայտ եկած զարգացումները, որտեղ բացահայտվում են բազմազգ և բազմամշակույթ հասարակության արժեհամակարգերը, հասարակության մեջ առկա բարոյական նորմերը: Սակայն ամերիկյան, այսպես կոչված, «մշակույթների հալման կաթսայում» ձևավորված հոգեբանական գործոնները իրենց ազդեցությունն են թողել այս կամ այն ազգային միավորման ինքնության դիմապատկերի վրա, որն էլ հանգեցրել է արժեհամակարգային փոփոխությունների: Նել Սայմոնն (1927-2018) իր պիեսներում սուր ծաղրի և հումորի միջոցով ներկայացնում է Ամերիկայում բնակվող ազգային միավորների, առաջին հերթին, հրեա հասարակության զրգացումները՝ այն ակնկալիքով, որ երգիծանքը կարող է էական ազդեցություն ունենալ՝ ազգային ինքնությունն ու ազգային մտածողությունը պահպանելու գործում:

Ատենախոսության հեղինակը մանրամասն անդրադարձել է Նիլ Սայմոնի «Տարօրինակ զույգ», «Զբոսայգում՝ ոտաբոբիկ», «Արևի տղաները», «Համար՝ կալիֆոռնիական հյուրանոցում», «Ես պիտի նկարահանվեմ», «Յոնքերսում մոլորվածները» և այլ պիեսների, որոնցում առավել ակնառու կերպով ներկայացված են ամերիկյան երազանքով տարված երիտասարդների կերպարները, որոնք հակված են ձուլվելու ամերիկյան հասարակությանն ու մոռանալու ազգային արմատները:

Աշխատանքի առավելություններից է սակավ անդրադարձ ունեցող, հայ ընթերցողին առաջին անգամ ներկայացվող գրողի ստեղծագործության հետ ծանոթությունը, և նրա պիեսների ներմուծումը գիտական ոսումնասիրությունների շրջանակ: Սույն ուսումնասիրությունն **արդիական** է, քանի որ թեմաները, որոնք արձարծված են, ի մասնավորի՝ համամարդկային հնչեղություն ունեցող խնդիրների

ազգային ինքնության, արժեհամակարգերի, սերունդների միջև անդունդի, ինչպես նաև Ամերիկայում ապրող տարբեր ազգերին առնչվող խնդիրները: Գրողի երկերում արծարծվող՝ երիտասարդների երազանքների և նպատակների, բարոյական պատասխանատվության և ազատության մոտիվների քննությունը չի կորցրել իր կարևորությունը մինչ օրս:

Նիլ Սայմոնի գրեթե բոլոր պիեսներում հանդիպում ենք սարկաստիկ կերպարների, որոնց գործողությունների հիման վրա էլ կառուցվում են այդ դրամատուրգիական գործերի բուն գաղափարական բովանդակությունը ու դրանց հիմնական ատաղձը կազմող հումորը և երգիծանքը: «Տարօրինակ զույգ», «Զբոսայգում՝ ոտաբոբիկ», «Արևի տղաները», «Համար՝ կալիֆոռնիական հյուրանոցում», «Ես պիտի նկարահանվեմ» և «Յոնքերսում մոլորվածները» պիեսներում գրողն առավել հանգամանորեն է անդրադարձել ամերիկյան երազանքին ցանկացած գնով հասնելու և ամերիկյան հասարակությանը ձուլվելու միտում ունեցող երիտասարդների կերպարներին:

Ատենախոսության **նորույթն** այն է, որ գրականագիտության մեջ առաջին անգամ համակողմանիորեն ուսումնասիրության նյութ է դարձել մեզ գրեթե ժամանակակից, ամերիկացի երևելի գրող Նիլ Սայմոնի երգիծանքի դրսևորումը՝ այնպիսի կարևոր խնդիրներ ուսումնասիրելիս, ինչպիսիք են ազգային և համամարդկայինի զուգադրումը, միջանձնային, ընտանեկան, մասնավորապես հրեաների ինքնությանը վերաբերող գոյաբանական հարցերը:

Այս բոլոր հիմնահարցերի ուսումնասիրությունը և հետազոտության արդյունքները կարող են հիմք ծառայել վերը նշված թեմաներին նվիրված գրականագիտական հետազոտ ուսումնասիրությունների համար:

Նպատակի, հայեցակարգային շրջանակի և քննության նյութի սահմանումից հետո Անի Ներսեսյանը ներկայացնում է իր լուծելիք խնդիրները, որոնք միաժամանակ ներկայանում են որպես գործողության պլան և ատենախոսության կառուցվածք: 131 էջ կազմող շարադրանքում տարանջատված են նշված խնդիրներով պայմանավորված երեք գլուխներ, եզրակացություն և գրականության ցանկ: Ատենախոսության նյութը վերլուծության է ենթարկված մի շարք մեթոդներով, որոնց ընտրությունը բխում է նախ հետազոտության նպատակից, ապա և նյութի բնույթից: Կիրառվել են պատմահամեմատական, վերլուծական մեթոդներ: Ուսումնասիրությունն իրականացվել է նաև հոգեբանական դիտարկումների տեսանկյունից:

Ատենախոսության առաջին **«Նիլ Սայմոնի դրամատուրգիայի կայացումը հրեա-ամերիկյան գրականության համատեքստում»** գլխում քննության է առնվել 20-րդ դարի երկրորդ կեսում Ամերիկայի Միացյալ Նահանգներում հաստատված բազմամշակութային գրականության հիմնական առանձնահատկությունները, ինչպես

նաև՝ այդ համատեքստում հրեա-ամերիկյան մշակույթի զարգացման միտումները: Վերլուծվել են նաև մինչև XX դարը գոյություն ունեցող Սեֆարդիկ հրեաների, ինչպես նաև Իդիշ գրականության մասին մի շարք ուսումնասիրություններ և հետազոտություններ: Դրվատելի է, որ այս գլխում անդրադարձ է կատարվել նաև ինքնության ճանաչումից և ազգային դրսևորումից բխող գոյաբանական մի շարք հարցադրումների՝ դրանք շաղկապելով այդ ժամանակաշրջանի ամերիկյան գրականության վրա անմիջական ազդեցություն ունեցող գոյապաշտության փիլիսոփայության հետ:

Ատենախոսության երկրորդ **«Երգիծանքի կոնցեպտուալ և ժանրային դրսևորումները Նիլ Սայմոնի պիեսներում»** գլուխը նվիրված է Նիլ Սայմոնի պիեսներում արտահայտված երգիծանքի հայեցակարգային և ժանրային առանձնահատկություններին: Այս գլխում անդրադարձ է կատարվել նաև որոշ գրաքննադատների աշխատանքներին, որոնք այս կամ այն կերպ իրենց նպաստն են թողել դրամատուրգի աշխատանքների գրաքննության գործում՝ Գրոբել Լոուրենս, Քերոլ Լոուսոն, Ջոն Լահր, Մակ Գովերն, Դմիտրի Նիկոլաև, որոնք փաստում են, որ քաղաքային կատակերգության ժանրում ստեղծագործող Նիլ Սայմոնն իր երկերի միջոցով միաժամանակ և՛ ծաղրում է իր ապրած ժամանակահատվածը, և՛ սահմանում է դրանում առկա նորամուծությունների՝ խիստ արգելքների (տաբուների) թույլատրելի աստիճանը՝ կախված մարդու հոգեկան ընկճվածությունից: Դրամատուրգի երգիծանքի մանրակրկիտ վերլուծության շնորհիվ ի հայտ են բերվում վերջինիս մոտեցումները իր ժամանակի բարոյա-հոգեբանական և հասարակական խնդիրներին. օտարության և միայնության դրամային, նրանց ապրելու ցանկությանը և գոյաբանական այլ խնդիրների, որոնք դարձել են տվյալ դարի անբաժան մասը:

Հատկապես հաջողված է ատենախոսության երրորդ **«Հրեա-ամերիկյան գրականության մեջ արծարծվող ինքնության ու փնտրտուքի ազդեցությունը Նիլ Սայմոնի պիեսների կերպարների վրա»** գլուխը, որտեղ ներկայացված են Նիլ Սայմոնի գրական հերոսների ինքնության փնտրտուքները: Ատենախոսը վեր է հանել դրամատուրգի գլխավոր խնդիրը, այն է՝ բացահայտել ամերիկյան իրականության մեջ հասարակություն-անհատ կապի յուրահատկությունները, մարդու օտարումը, գոյաբանական վախերը, գաղթյալի հոգեբանության և սեփական թերարժեքության բարդույթից ձերբազատվելու անհնարինությունը, տարբեր ներգաղթաց ազգերի, այդ թվում և հրեաների, ազգային ինքնության կորստի խնդիրը՝ իրեն հատուկ մեղմ ու սրամիտ հումորով, երբեմն էլ՝ քողարկված երգիծանքով:

Ատենախոսության *Եզրակացություն* բաժնում ներկայացված են այն հիմնական դրույթները, որոնց ատենախոսը հանգել է ուսումնասիրության արդյունքում և որոնք պատասխանն են ատենախոսության սկզբում առաջադրված հարցադրումներին:

Այդուհանդերձ, ԱՆԻ ՆԵՐՍԵՍՅԱՆԻ ատենախոսությունն առավել կատարյալ տեսնելու ցանկությունից ելնելով է, որ հարկ ենք համարում ներկայացնել մի քանի նկատառում և առաջարկ, որոնք, կարծում ենք, ատենախոսը կարող է շահեկանորեն հաշվի առնել գիտական հետազոտության ընթացքում: Մասնավորապես՝

1. Ատենախոսը որպես հետազոտության մեթոդաբանական հիմք նշում է այն մեթոդները /պատմահամեմատական, վերլուծական, հոգեբանական/, որոնց կիրառմամբ իրականացվել է աշխատանքը /ատենախոսություն՝ էջ 7, սեղմագիր՝ էջ 5/: Սակայն մեթոդը և մեթոդաբանությունը տարբեր հասկացություններ են: Որոշակի առարկայի վերաբերյալ խնդրի բարձրաձայնումը, վարկածի մշակումը, տվյալների հավաքումը, վերլուծությունը և եզրակացությունները իրականացվում են հետազոտության մեթոդների միջոցով: Մեթոդաբանությունը տվյալ հետազոտության այն մետալեզուն է, տեսական այն դրույթները, գործիքակազմը, որոնք ապահովում են վերլուծության տեսական-մեթոդաբանական ապարատը<sup>1</sup>: Թեպետ ատենախոսը նշում է, որ կարևորել են նաև քննադատական գրականության վերլուծությունը, սակայն չի մանրամասնում, թե որ տեսություններն ու տեսական դրույթներն են հիմք ծառայել վերլուծության համար:
2. Ատենախոսը սեղմագրում նշում է, որ «ատենախոսության գիտական նորույթներից մեկն էլ Նիլ Սայմոնի պիեսներում կարևորագույն տեղ հատկացվող *երկրնտրանքի* վերհանումն է. իր երկերում հեղինակը քննարկում է ոչ թե իրավիճակը, այլ դրա այլընտրանքային լինելը, իմպլիցիտ կերպով ակնարկում դրանց այլընտրանքային հնարավորությունները» /տե՛ս սեղմագիր էջ 5/: Կարծում եմ, այս եզրահանգումը ոչ թե ատենախոսության նորույթն է, այլ գրողի նորարական մոտեցումներից մեկը, որի մասին նշվում է ատենախոսության 4-րդ և 63-րդ էջերում: Այն կարող է սուկ ատենախոսության խնդիրներից մեկը լինել և դառնալ վերլուծության արդյունքում ստացված եզրակացություն:
3. Ցանկալի կլիներ առավել մանրամասն ներկայացնել դրամատուրգի պոետիկան և գեղագիտությունը, պատկերային համակարգը /այդ մասին հպանցիկ նշում կա ատենախոսության 58-րդ, 68-րդ էջերում/, հումորի, երգիծանքի և ծաղրի արտահայտման միջոցները՝ գրականագիտական վերլուծության առավել հստակ պատկեր ունենալու համար:
4. Ատենախոսության մեջ երբեմն հանդիպում են ընդհանրական եզրահանգումներ, կրկնվող մտքեր, հայերեն անհարթ շարադրանք, թերևս այլ լեզուներից ոչ հստակ թարգմանություններ (տե՛ս Ատենախոսություն էջ 16, 11, 22, 45, 55, 121, 124, 126,

<sup>1</sup> տես՝ <https://hy.living-in-belgium.com/difference-between-research-method-and-research-methodology-607>; [.https://paara.am/wp-content/uploads/2012/06/](https://paara.am/wp-content/uploads/2012/06/):

